

# Փոխանցել Աստծո սերը



Էլլի Բ., 12 տարեկան, Կենտուկի, ԱՄՆ

Երբ ժամանակ առաջ մեր ընտանիքը տեղափոխվեց Կենտուկի: Ես իսկապես շատ վշտացած էի, քանի որ հեռանում է իմ ընկերներից և մեծ ընտանիքից: Բայց այս եկեղեցին շատ էր տարբերվում իր իմացած եկեղեցուց: Առաջին անգամ, երբ մենք գնացիք եկեղեցի, ես տեսա, որ այնտեղ քիչ մարդիկ կային: Երբ ես հասկացա, թե որքան փոքր էր իմ ճյուղը, որոշեցի, որ դրա մասին վատ մտածելու փոխարեն ես ինչ-որ բան պիտի անեմ:

Հաջորդ օրը ես ու մայրիկս գնացիք խանութ: Նախքան տանից դուրս գալը, ես վերցրի մի քանի փոխանցվող քարտեր: Երբ մենք հասանք խանութ, ես վերցրի մի կոնֆետ և գնացի դրամարկղի մոտ: Գանձապահը գնահատեց կոնֆետը, ապա տվեց ինձ: Ես կոնֆետը վերադարձրի նրան: Նա շփոթվեց ու ասաց. «Դուք հենց նոր վճարեցիք սրա համար»:

Ես ասացի. «Ես գիտեմ, բայց ես այն ձեզ եմ տալիս որպես նվեր»: Հետո ես մի փոխանցվող քարտ դրեցի կոնֆետի հետ: Նա ժպտաց և շնորհակալություն հայտնեց ինձ: Նա նայեց քարտի դարձերեսին, որտեղ ես գրել էի. «Բոլորս Աստծո զավակներն ենք»: Ես ուրախ հեռացա, իմանալով, որ եթե նույնիսկ նա չմիանա Եկեղեցուն, ես արդեն ինչ-որ լավ բան էի արել:

Ավելի ուշ այդ օրը ես հիշեցի, որ բոլոր քարտերը թողել էի դրամարկղի մոտ: Հաջորդ անգամ, երբ գնացի խանութ, հարցրեցի՝ արդյո՞ք դրանք դեռ այնտեղ էին: Հետո ես ինչ-որ բան տեսա և կանգ առա: Հինգ դրամարկղերի մոտ դրված էին քարտերը, որոնցում ասվում էր. «Բոլորս Աստծո զավակներն ենք»: Գանձապահը փոխանցել էր դրանք մյուսներին: Ես շատ երջանիկ էի այն քայլի շնորհիվ, որը կատարել էի: ■

